# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գրիբոյեդով, , griboyedov.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 76

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ17 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու թիվ 17 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՇ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
գ. Գրիբոյեդով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի29-ի
N 76 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 17 ՆԻՍՏԻ

1 .Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 17 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան/

2. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի համայնքապետարանի աշխատակազմի և «Գրիբոյեդովի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան/

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկ. /Վ. Գրիգորյան/

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ-Ղուկասյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գրիբոյեդով, , griboyedov.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 77

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Որոշել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի վարձատրության չափը երկու հարյուր ութսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՇ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
գ. Գրիբոյեդով

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գրիբոյեդով, , griboyedov.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 78

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և <<Գրիբոյեդովի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՇ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
գ. Գրիբոյեդով

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 29-ի
N 78 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

| Հ/Հ | Աշխատակիցների թվաքանակը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 280.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 180.0 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 225.0 |
| 4 | Առաջատար մասնագետ | 1 | 145.0 |
| 5 | Առաջատար մասնագետ | 1 | 145.0 |
| 6 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 140.0 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 140.0 |
| 8 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 140.0 |
| 9 | Վարորդ | 1 | 120.0 |
| 10 | Հավաքարար | 1 | 92.618 |
| 11 | Օժանդակ բանվոր | 1 | 92.618 |
| 12 | պահակ | 1 | 114.5 |
| 13 | պահակ | 1 | 114.5 |
| | | | |

Ավագանու անդամներ՝

Արզումանյան Ա.

Գրիգորյան Գ.

Նազարյան Ս.

Սահակյան Ն.

Հավելված2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 29-ի
N 78 որոշման

«ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

| Հ/Հ | Աշխատակիցների թվաքանակը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 125.0 |
| 2 | Դաստիարակ | 1.12 | 108.0 |
| 3 | Դաստիարակ | 1.12 | 108.0 |
| 4 | Դաստիարակի օգնական | 1 | 92.618 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1 | 92.618 |
| 6 | Դաշնակահար | 0.5 | 108.0 |
| 7 | Հաշվապահ | 0.5 | 92.618 |
| 8 | Բուժքույր | 0.5 | 92.618 |
| 9 | Տնտեսվար | 0.5 | 92.618 |
| 10 | Խոհարար | 1 | 92.618 |
| 11 | Հավաքարար | 0.5 | 92.618 |
| 12 | Խոհարարի օգնական | 0.5 | 92.618 |
| 13 | Լվացարար | 0.25 | 92.618 |
| 14 | Օժանդակ բանվոր | 0.5 | 92.618 |
| 15 | Պահակ | 1 | 114.5 |
| 16 | Պահակ | 1 | 114.5 |

Ավագանու անդամներ՝

Արզումանյան Ա.

Գրիգորյան Գ.

Նազարյան Ս.

Սահակյան Է.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գրիբոյեդով, , griboyedov.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 79

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2020թվականի դեկտեմբերի 16-ի N06/27.1/28311-20 գրությամբ պետական փորձագիտական եզրակացությունը և ամփոփաթերթը.

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:
2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0,5 գործակիցը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՇ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
գ. Գրիբոյեդով

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N79-Ն որոշման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է ապահովելու համայնքի տարածքում ինչպես <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, այնպես էլ <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով տեղական տուրքերի և վճարների հավասար մատչելիությունը՝ ապահովելու համայնքի բյուջեի եկամտային մասի մուտքերի ամրագրումը: Այն ապահովում է նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջների կատարումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/27.1/28311-20
«22» 12 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 243 գրության՝ կից ներկայացվում է «Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Գրիբոյեդով համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

12/16/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Արտյոմ Խաչատրյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-121

23.12.2020թ.

Արդարադատության
Նախարարություն

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## «Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Գրիբոյեդով համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Գրիբոյեդով համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում «մարզի» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «Գրիբոյեդով» բառը:

2. Նախագծի նախաբանում «մասի 18-րդ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «կետով» բառը:

3. Նախագծի հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի գ. պարբերությունից անհրաժեշտ է հանել «սույն օրենքի իմաստով» բառերը:

**Իրավական ակտերի փորձաքննության**
**գործակալության պետ՝**

12/16/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| 1. | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | ՀՀ արդարադատության նախարարություն | 1. Որոշման նախագծի վերնագրում <<մարզի>> բառից հետո անհրաժեշտ է լրացնել <<Գրիբոյեդով>> բառը<br>2. նախագծի նախաբանում <<մասի 18-րդ>> բառերից հետո անհրաժեշտ է լրացնել <<կետով>> բառը<br>3. Նախագծի հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի գ. Պարբերությունից անհրաժեշտ է հանել < սույն օրենքի իմաստով>> բառերը | Առաջարկություններն ընդունված են | Առաջարկությամբ ներկայացված փոփոխություններն ու թերությունները վերացված են |

2020 թվականի դեկտեմբերի 29

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ*
*N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ*

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

## I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. ***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում սահմանվում են տեղական տուրքի հետևյալ դրույքաչափերը.***

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝

յոթ հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ.

բ. 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

տասնհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝

քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝

քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝

հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար ՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝

մեկ հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

երկու հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության

թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

մեկ հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝

երկու հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

4)Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

մեկ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ

5)Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

երեսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ

6)Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

7)Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

երկու հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

հինգ հազար երկու հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝

վեց հազար յոթ հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

տաս հազար երկու հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

տասներկու հազար յոթ հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

երկու հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

հինգ հազար երկու հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

վեց հազար յոթ հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

տաս հազար երկու հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

տասներկու հազար յոթ հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

-. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում '

քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

8) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝

մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝

տասնհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝

հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝

մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ դրամ,

դ. խաղատների համար՝

չորս հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ դրամ,

ե.շահումով խաղերի համար՝

մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

զ. վիճակախաղերի համար՝

յոթանասունհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

10) Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ Հայաստանի Հանրապետության դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հարյուր դրամ Հայաստանի Հանրապետության դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

11) Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

մեկ հազար յոթ հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝

զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝

յոթ հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12)Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

13) Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝

հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

14) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

երկու հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

15) Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝

մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝

երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝

երեք միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝

հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ.

16) Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝

մեկ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

17) Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. Կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացույցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝

տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. Հեստապարային ակումբի համար՝ օրացույցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝

մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

## II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

*2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.*

1)Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

3)Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝

հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

4) Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

6) Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

7) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

ա. բնակելի նշանակության շենքերում կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝

վաթսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝

- առևտրի (այդ թվում՝ շուկաների),հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝
հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝
քառասուն Հայաստանի Հանրապետության դրամ,

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝
ութ Հայաստանի Հանրապետության դրամ,

- կրթական, մշակութայի, առողջապահական, սպորտային գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝
հինգ Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. ոչ կենցաղային աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝
երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար.
մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

9) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

ա. համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝
հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. այլ համայնքի բնակիչ համարվող անձանց համար

յոթ հազար Հայաստանի Հանրապետության դրամ

գ. նպաստառու, միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամության կարգ ունեցող, մանկապարտեզ հաճախող երկուսից ավել երեխա ունեցող ընտանիքների երրորդ երեխայի համար՝

երկու հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

10) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝
զրո դրամ,

11) Համայնքի ղեկավարի կողմից հացեի որոշում տրամադրելու համար՝
հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

12) Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝

| | Անասնաբուժականծառայությանանվանումը | Գինը /դրամ/ |
|---|---|---|
| 1 | Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն | 0 |
| 2 | Ծննդօգնություն<br>1. թեթևմիջամտություն<br>2. ծանրմիջամտություն | <br>1000<br>2000 |
| 3 | Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հականանասնահամաճարակային միջոցառումների) | Մանրկենդանի0<br>Խոշորկենդանի0 |
| 4 | Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար | 500 |
| 5 | Ախտահանություն | 1 քառ. մետր 100 |
| 6 | Միջատազերծում (դեզինսեկցիա) | 1 քառ. մետր 100 |
| 7 | | |
| 8 | Արհեստական սերմնավորում | 15000 |
| 9 | | |
| 10 | Կենդանիների նախասպանդային զննում՝կախված կենդանու տեսակից | Մանր կենդանի 1000<br>Խոշորկենդանի 2000 |

:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՔԵՇԻՇ-ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գրիբոյեդով, , griboyedov.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 80

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2020թվականի դեկտեմբերի 28-ի N 06/27.1/29541-2020 գրությամբ պետական փորձագիտական եզրակացությունը և ամփոփաթերթը.

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

3. Սահմանել,որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50%-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՇ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 29
գ. Գրիբոյեդով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ավագանու
2020թվականի դեկտեմբերի 29-ի
N 80-Ն որոշման

# ԲՅՈՒՋԵ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ

Եկամտային մասով՝ 59204.8 հազ. դրամ
Ծախսերի մասով՝ 59204.8 հազ. դրամ
Դեֆիցիտ՝ 0.0 հազ. դրամ

1. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները՝ համաձայն հատված 1-ի:
2. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝համաձայն հատված 3-ի:
4.Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված4-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված5-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

Ավագանու անդամներ՝

Արզումանյան Ա.

Գրիգորյան Գ.

Նազարյան Ս.

Սահակյան Է.

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 80-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու սահմանելու մասին>> N80-Ն որոշումն մշակվել է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

*0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015*

*էլ. Փոստ suren.galstyan@justice.am*

N 06/27.1/29541-2020

<28>______12______2020թ.

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՊԱՐՈՆ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Գրիգորյան,**

Ի պատասխան Ձեր 2020 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 253 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Invalid signature

X

Suren Galstyan

**ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատարող՝ Տաթևիկ Ղազարյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 18

28.12.20

Արդարադատության
Նախարարություն

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովհամայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին»Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովհամայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. Նախագծի վավերապայմաններում «2021» թիվն անհրաժեշտ է փոխարինել «2020» թվով:

2.Նախագծի նախաբանում «Բյուջետային համակարգի մասին» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

3. Նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասինարված հղումը:

3.Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի «համաձայն հատված 1-ի, հատված 2-ի, հատված 3-ի, հատված 4-ի, հատված 5-ի, հատված 6-ի» բառերն անհրաժեշտ է հանել և հիշյալ կետերում նշվածները հաստատել համաձայն համապատասխան համարակալում ունեցող հավելվածների: Այս առումով  անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բյուջեի համապատասխան հատվածների ներառման դեպքում, դրանք նույնպես անհրաժեշտ է ներկայացնել առանձին հավելվածի (հավելվածների) տեսքով՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների:

4.Նախագծում «ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ» բառերից հետո անհրաժեշտ է հանել «2020 թվականի դեկտեմբերի, Գրիբոյեդով համայնք» բառերը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝**

Invalid signature

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| 1. | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | ՀՀ արդարադատության նախարարություն | 1.Նախագծի նախաբանում <<Բյուջետային համակարգի մասին>> բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել <<Հայաստանի Հանրապետության>> բառերը<br>2. Նախագծի 2-դ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի << համաձայն հատված 1-ի, հատված 2-ի, հատված 3-ի, հատված 4-ի, հատված 5-ի, հատված 6-ի>> բառերը հանել և հաստատել համաձայն հավելվածի: | Առաջարկություններն ընդունված են ի գիտություն | Առաջարկությամբ ներկայացված խմբագրումները ու թերությունները կատարված են |

2020 թվականի դեկտեմբերի 29